ԵՐԻՏԱՍԱՐԴ ՀԱՅ ԱՐՎԵՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԳԻՏԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԸ ԵՎԳԻՏԱԺՈՂՈՎ՝ ՆՎԻՐՎԱԾ ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 125 ԱՄՅԱԿԻՆ

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտը 2005 թ. նոյեմբերի 16–17-ին գումարեց երիտասարդ հայ արվեստաբանների գիտական անդրանիկ երկօրյա նստաշրջանի նիստերը: Հայրենական արվեստաբանության կյանքում այս աննախընթաց ձեռնարկը համախմբեց արվեստի բոլոր բարձրագույն ուսումնական հաստատությունների, հայագիտական կենտրոնների, նաև Սփյուռքի 38 երիտասարդ հայագետ-արվեստաբանների: Գիտական նըստաշրջանի աշխատանքներին մասնակցեցին երիտասարդ գիտնականներ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտից, Երեվանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայից (ԵՊԿ), Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայից, Երուսաղեմի հրեական համալսարանի հայագիտական բաժնից, Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտից (ԵԹԿՊԻ), Երևանի պետական համալսարանի հայ արվեստի պատմության ու տեսության ամբիոնից, Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանից, Հայաստանի ազգային պատկերասրահից, Գրականության և արվեստի պետական թանգարանից, այդ թվում՝ գիտության 16 թեկնածուներ:

Գիտական նստաշրջանի բացման նախօրյակին ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրինության ջանքերով լույս տեսավ նստաշրջանի զեկուցումների ժողովածուն:

Բացման խոսքով հանդես եկավ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն, արվեստագիտության թեկնածու *Ա. Աղասյանը:* Նա նշեց, որ երիտասարդ հայ արվեստաբանների գիտական անդրանիկ նստաշրջանը տեղի ունեցավ մեր պետության համար հոբելյանազարդ տարում՝ 2005-ին, որը նվիրական է ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի և երիտասարդ արվեստաբանների կյանքում: Սրանից ճիշտ տասը տարի առաջ ՀՀ ԲՈՀ նախագահի հրամանով ստեղծվեց ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի՝ արվեստագիտության գծով գիտական աստիճանաշնորհման՝ հանրապետությունում միակ 016 մասնագիտական խորհուրդը: Խորհրդում են գիտական կյանքի ուղեգիր ստացել նստաշրջանին մասնակից արվեստագիտության թեկնածուները, նույն խորհրդում պիտի իրենց թեկնածուական ատենախոսություններն առաջիկայում պաշտպանեն նստաշրջանին մասնակցող ասպիրանտներն ու գիտաշխատողները:

Ողջունելով գիտական նստաշրջանի մասնակիցներին և հյուրերին՝ ՀՀ ԳԱԱ հումանիտար գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ակադեմիկոս *Վ. Բարխուդարյանը*, կարևորելով երիտասարդ հայ արվեստաբանների առաջին գիտական նստաշրջանի անցկացման անհրաժեշտությունը, իրավացիորեն նշեց, որ այսօր պատմաբաններից և արևելագետներից շատերն իրենց գիտական առաջին մկրտությունն ստացել են երիտասարդ պատմաբանների, երիտասարդ արևելագետների՝ արդեն տասնամյակների կենսագրություն ունեցող գիտաժողովների ընթացքում: Այս առումով նա ընդգծեց ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի երիտասարդ տնօրինության ջանքերը, որոնց շնորհիվ կյանքի կոչվեց նաև երիտասարդ արվեստաբանների անդրանիկ նստաշրջանը, որը կարևոր առաքելություն ունի երիտասարդներին կրթելու գործում:

Լիագումար նիստում առաջինը ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի փոխտնօրեն-գիտքարտուղար, արվեստագիտության թեկնածու *Աննա Ասատրյանի* «Անվերջանալի ոդիսական. Տ. Չուխաճյանի «Արշակ Բ» օպերայի նախերգանքը» զեկուցումն էր, որում բանախոսն առաջ քաշեց նաև Տիգրան Չուխաճյանի երկերի լիակատար ժողովածուի ակադեմիական հրատարակության կարևորության հարցը: Տաղանդաշատ գրաֆիկ Տ. Խաչվանքյանի և հայ գրաֆիկայի դասական Հ. Կոջոյանի ստեղծագործական առնչությունները բացահայտեց արվեստագիտության թեկնածու *Արթուր Ավագյանը*: Արվեստագիտության թեկնածու *Մ. Նավոյանը* ներկայացրեց «Հայ հիմներգության հեղինակի հարցը» բանախոսությունը: Արվեստագիտության թեկնածու *Ս. Նալբանդյանը* խոսեց XX դարասկզբի հայկական թատրոնում իտալական դիմակների փոխակերպման մասին:

Գիտական նստաշրջանն ընթացավ երեք մասնաճյուղերի (*«Կերպարվեստ և ճարտարապետություն», «Երաժշտություն»* և *«Թատրոն»)* նիստերում: Հընթացս վեց նիստերի լսվեց 30 զեկուցում:

«Կերպարվեստ և ճարտարապետություն» մասնաճյուղի 11 զեկուցումները ներկայացնում էին ինչպես միջնադարյան, այնպես էլ նոր և նորագույն շրջանի ճարտարապետության և կերպարվեստի հարցերը: Նոր Ջուղայի հայ վարպետների մանրանկարներում արևմտաեվրոպական պատկերագրական սխեմաների մասին էր Երուսաղեմի հրեական համալսարանի հայագիտական բաժնի դոկտորանտ, արվեստագիտության թեկնածու *Մ. Առաքելյանի* բանախոսությունը: Գառզուի ստեղծագործության հասուն շրջանը ներկայացրեց արվեստագիտության թեկնածու *Ա. Հովեսյանը*: XII-XIV դարերի հայկական ճարտարապետության մեջ հյուսքի, աստղազարդի և շեղանկյան դերը բացահայտեց արվեստագիտության թեկնածու *Ա. Գևորգյանը*, իսկ ճարտարապետության թեկնածու *Ա. Հասրաթյանի* զեկուցումը Հայաստանի վաղ միջնադարյան պալատական համալիրների հորինվածքի ձևագոյացման մասին էր:

Կրտսեր գիտաշխատող *Մ. Կիրակոսյանը* ի մի էր բերել Փանոս Թերլեմեզյանի մտորումներն իր ուսուցիչների մասին, իսկ ԵՊՀ հայ արվեստի տեսության և պատմության ամբիոնի ասպիրանտ *Ի. Թաջարյանի* զեկուցումը նվիրված էր իրանահայ լուսանկարիչ Անթուան Խան Սևրուգինին: Գիտական նստաշրջանի հայտնությունը դարձավ Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի ասպիրանտ *Վ. Ազատյանի* «Համաշխարհային արվեստի պատմության կայացումը և հայ արվեստի պրոբլեմները XIX դարի Գերմանիայում» զեկուցումը: Աշխույժ բանավեճեր առաջացրեցին ԵՊՀ դասախոսներ *Լ. Սարգսյանի* «Գեղարվեստական այլախոհությունը 1960-1990-ական թվականներին և հետխորհրդային շրջանի հայ կերպարվեստում» և *Ա. Սարգսյանի* «Մոդեռնիստակա՞ն, թե՞ պոստմոդեռնիստական «Ողջաբերդ» նախագիծը» զեկուցումների վիճահարույց դրույթները: Ճարտարապետության ենթամասնաճյուղում լսվեցին նաև ԵՊՀ դասախոս *Զ. Հակոբյանի* «Հայկական քառակող կոթողների թվագրման հարցի շուրջ» և ԵՊՀ ասպիրանտ *Լ. Միքայելյանի* «Հայաստանի վաղքրիստոնեական եկեղեցիների և անտիկ պալատական դահլիճների ճարտարապետական առնչությունները» բանախոսությունները:

«Երաժշտություն» մասնաճյուղի աշխատանքների ընթացքում լսվեց 12 բանախոսություն: Ներկայացված էին տեսական և պատմական երաժշտագիտության, երաժշտական միջնադարագիտության ու ֆոլկլորագիտության, ինչպես և արդի երաժշտության հարցերը լուսաբանող և երաժըշտության պատմության վերա-

բերյալ *Ռ. Սմբատյանի, Ն. Ավետիսյանի, Ա. Խաչատրյանի, Օ. Նուրիջանյանի* զեկուցումները:

Առանձին բանախոսություններ նվիրվեցին հայ կոմպոզիտորների ստեղծագործություններին՝ ԵՊԿ ասիստենտ, արվեստագիտության թեկնածու *Ա. Ավանեսովը* բացահայտեց պոստմոդեռնիզմի ազդեցությունը հայ երաժշտարվեստում: Ա. Խուդոյանի թավջութակի կոնցերտներին էր նվիրված ԵՊԿ ասպիրանտ *Զ. Միսիկյանի* զեկուցումը: ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ասպիրանտ *Մ. Ասատրյանը* բացահայտեց հնչյունի վերափոխությունները և նրա օբերտոնային սպեկտրի պոլիֆոնիկ շերտավորումներն Ավետ Տերտերյանի լարային 2-րդ կվարտետում: Լ. Աստվածատրյանի սիմֆոնիայում և «Հավիկ» պրոլոգում հայ ավանդական երաժշտական նյութի կիրառման մասին էր ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ասպիրանտ *Տ. Շախկուլյանի* զեկուցումը: ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ասպիրանտ *Լիլիթ Մարտիրոսյանը* բնութագրեց ձայների մեղեդային կայուն տարրերը: Երաժշտական ֆոլկլորագիտության ենթամասնաճյուղում ԵՊԿ ասպիրանտ *Մ. Տիգրանյանը* ընթերցեց «Թագվորածառ» զեկուցումը, իսկ *Ն. Բաղդասարյանն* անդրադարձավ XX դարասկզբի հայ կոմպոզիտորական ստեղծագործության մեջ ժողովրդական երգի խմբերգային մշակումներին: Հարմոնիայի հիմնական դրույթները XX դարի երաժշտության դիրքերից ներկայացրեց ԵՊԿ արվեստագիտության թեկնածու *Ռ. Ստեփանյանը:*

«Թատրոն» մասնաճյուղի աշխատանքների ընթացքում ընթերցվեց 7 զեկուցում: Հակոբ Պարոնյանի թատերախոսության առանձնահատկության մասին խոսեց ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու *Ա. Խզմալյանը*, Լ. Շանթի «Հին աստվածներում» սիմվոլիզմի ակնարկները բացահայտեց արվեստագիտության թեկնածու *Վ. Գևորգյանը,* իսկ արվեստագիտության թեկնածու *Ա. Հարությունյանն* ընթերցեց «Աֆիշը՝ որպես թատերական ներկայացման սկիզբ» բանախոսությունը: *Գ. Վանյանը* ներկայացրեց Շեքսպիրի «Օթելլոն» Արմեն Գուլակյանի գրառումներում, *Վարդան Մկրտչյանի* զեկուցումը նվիրված էր Վաղարշ Վաղարշյանի Համլետի խաղային մանրամասներին, իսկ Գրականության և արվեստի պետական թանգարանի գիտաշխատող *Նաիրա Շահվալադյանի* բանախոսությունն էր «Ազնիվ Հրաչյայի մրցորդային դերը («Կամելիազարդ տիկինը»)»: Այս մասնաճյուղում էր ընդգրկված նաև *Ա. Համբարձումովի* «Կինոն՝ որպես ազգի հոգեկերտվածքի արտացոլում» բանախոսությունը:

Եզրափակիչ խոսքում *Ա. Աղասյանը* նշեց, որ գիտական նստաշրջանի աշխատանքները ևս մեկ անգամ փաստեցին, որ հայ արվեստագիտությունը, ի դեմս երիտասարդ արվեստաբանների, ունի հուսալի ներուժ և զարգացման մեծ հեռանկար:

* * *

XX դարի հայ կերպարվեստի պատմության մեջ առանձնահատուկ է Մարտիրոս Սարյանի՝ այդ շրջանի մեր նկարչության ազգային դպրոցի հիմնադրի տեղը, որի արվեստը հայ ժողովրդի գեղագիտական ըմբռնումների, գեղարվեստական մտածողության առավել ցայտուն, խոր և ամբողջական դրսևորումներից է:

2005 թ. դեկտեմբերի 19-ին ՀՀ ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճում տեղի ունեցավ ԳԱԱ գիտաժողով՝ նվիրված ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Մ. Սարյանի (1880-1972) ծննդյան 125 ամյակին: Գիտաժողովը եզրափակեց հոբելյարի՝ 2005 թ. ընթացքում նախատեսված հոբելյանական միջոցառումների շարքը: Բացելով գիտաժողովը՝ ՀՀ ԳԱԱ պրեզիդենտ, ակադեմիկոս *Ֆ. Սարգսյանը* նշեց. «Ովքեր երբևէ շփվել են Սարյանի հետ, կհաստատեն, որ Վարպետի հետ խոսելն անգամ իրենց ոգևորել է և մղել արարելու: Եվ պատահական չէր, երբ նա ընտրվեց Հայաստանի գիտությունների ակադեմիայի իսկական անդամ, դա արվեց մեծ սիրով ու նվիրումով. դա պատիվ էր ոչ միայն Վարպետի, այլև Ակադեմիայի համար, մեզ՝ բոլորիս համար»: Այնուհետև ԳԱԱ պրեզիդենտը խոսեց մեծ նկարչի մարդկային նկարագրի մասին՝ նկատելով, որ «մեծ նկարիչ լինելուց բացի, Սարյանը մեծ մարդ էր»: Հավարտ խոսքի՝ Ֆ. Սարգսյանը նշեց, որ ամբողջ կյանքում հայրենի երկրին, հարազատ ժողովրդին ու հայ արվեստին ծառայած գործիչը նաև մեծ հայ էր:

«Մարտիրոս Սարյանի գործունեության մեկ բնագավառը» զեկուցման մեջ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս *Վ. Հարությունյանն* անդրադարձավ ճարտարապետական հուշարձանների պահպանության ասպարեզում Մ. Սարյանի կատարած աշխատանքին՝ կարևորելով նրա վաստակը Հայաստանի պատմական հուշարձանների պահպանության գործում, որը սկիզբ էր առել դեռևս Մոսկվայում, XX դարասկզբին, շարունակվել, երբ Վարպետը 1921-ին տեղափոխվեց Երևան, և առավել արգասաբեր դարձել 1964-ից, երբ նա ընտրվեց Պատմական հուշարձանների պահպանության հայկական ընկերության նախագահ:

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն, արվեստագիտության թեկնածու *Ա. Աղասյանը* «Ազգայինը Մարտիրոս Սարյանի արվեստում» բանախոսության մեջ նշեց, որ Սարյանի ստեղծագործության ազգային դիմագծերը, գեղարվեստական լեզվի ազգային առոգանությունը չեն վրիպել ինչպես հայ, այնպես էլ օտար արվեստագետների և արվեստաբանների ուշադրությունից: Նկարիչը մեծ նշանակություն է տվել արվեստում ազգային յուրահատկությանը, բազմիցս նշել, որ «ազգայինից դուրս արվեստ չի լինում», որ «ազգայինն է արվեստը սնող հողն ու արմատը»: Միաժամանակ նա քաջ գիտակցել է, որ արվեստում չկան «ազգային ոճի» մեկընդմիշտ տրված, քարացած ձևեր, որ այդ խնդիրը չի կարող լուծվել մեխանիկորեն: «Նկարիչն ապրում է հայրենի երկրում,– գրել է Սարյանը,– ապրում է՝ շրջապատված հայրենակիցներով, հայրենի բնաշխարհի մեջ: Նրա աչքը կրթվում-դաստիարակվում է այդ միջավայրում: Եվ ազգայինը, հետևաբար, յուրաքանչյուր նկարչի մոտ անհատական յուրահատուկ ձև է ստանում»: Արվեստի ազգային բնույթը, ըստ Սարյանի, պայմանավորված է նաև պատմական կոնկրետ իրավիճակով, որը տարբեր է տարբեր ժամանակներում ապրած և ստեղծագործած, թեպետև ազգային նույն մշակույթին պատկանող արվեստագետների համար: Մինչդեռ շատերը, նկարչի կարծիքով, խնդրին մոտենում են մակերեսորեն, տարբերություն գրեթե չեն տեսնում ազգայինի և ազգագրականի, բնաստեղծ ոճի և նմանակող ոճավորության միջև:

Մ. Սարյանը համոզված էր, որ ճշմարիտ արվեստագետի մոտ ազգայինը ձևավորվում, զարգանում, խորանում և, ի վերջո, նույնանում է ճշմարիտ արվեստագետի ստեղծագործական համոզմունքի, գեղարվեստական մտածողության հետ աստիճանաբար ու հիմնականում դրսևորվում ինքնաբերաբար՝ անկախ նրանից, թե որքանով է դա գիտակցում նկարիչը:

Սարյանը հասկանում էր նաև, որ ազգային լեզվով արտահայտվելու և ոչ միայն հայերի, այլև օտարների կողմից ընդունվելու համար անհրաժեշտ է յուրացնել եվրոպական նկարչության նորագույն փորձը:

Սարյանը կարևորեց «գծերի խստապարզ հստակությունը, կատարելության հասնող ձևերի ու ծավալների մոնումենտալ զսպվածությունը, բնության հետ ներդաշնակ համադրությունը», իսկ նկարչության ու ժողովրդական արվեստի մեջ՝ «գույների պարզությունը և գեղարվեստական ձևի ընդհանրացումը»: Նկարիչն առաջնորդվում է գույնի և գծի առավելս պարզեցման սկզբունքով:

Ա. Աղասյանը կարևորեց 1909 թվականը, երբ նկարիչը վերջնականորեն հրաժարվեց հեքիաթային-կիսաֆանտաստիկ թեմաներից ու մոտիվներից, գեղարվեստական կերպավորման սիմվոլիստական եղանակներից և դեկորատիվ-մաներային, գծային-օրնամենտալ ոճավոր լեզվից ու ստեղծեց իր առաջին գլուխգործոցները՝ «Ինքնանկարը» (երկու տարբերակով) և «Վազող շունը»:

1910-1913 թվականներին դեպի Արևելք Սարյանի կատարած ուղևորությունների ընթացքում նրա արվեստն է՛լ ավելի է կատարելագործվում: Նախորդ շրջանում դեռ նոր նշմարված մոնումենտալ-դեկորատիվ միտումը բյուրեղանում, առավել հստակ ու արտահայտիչ ձև է ընդունում՝ «Փողոց: Կեսօր: Կոստանդնուպոլիս» (1910), «Քայլող կինը» (1911), «Փյունիկյան արմավենի» (1911): Նկարչի արվեստն առաջին հերթին մոնումենտալ նոր շունչ է առնում: Սարյանի 1910-ական թվականների կտավներում համաշխարհային նոր նկարչության մեջ առաջին անգամ Արևելքը ներկայանում է ռեալիստական այդչափ համոզիչ, կենդանի տեսքով: Հայաստանում Սարյանի արվեստը կենսական հզոր ազդակներ ստացավ ու ազգային ցայտուն գծերով օժտվեց: Այսուհետ նկարչի ստեղծագործության եթե ոչ միակ, ապա գլխավոր թեմաներն են դառնում վերածնվող հայրենիքը, հայրենի բնաշխարհը, խաղաղ երկնքի տակ ստեղծագործ կյանքով ապրող հայ ժողովուրդը: 1920-ական, ապա 1950-ական թվականներին կերտած Հայաստանի հավաքական կերպարը, նրա բնորոշ տեսարանները հեռավոր ու բարձր դիտակետերից, լայն ու ընդարձակ համապատկերով ներկայացնող կտավներում («Հայաստան», 1923, «Լեռներ: Հայաստան», 1923, «Արագած», 1926, «Քարինջ գյուղը Թումանյանի լեռներում», 1952, «Լալվար», 1952, «Հոկտեմբերյան բնանկար», 1953 և այլն) նկարչին վերջապես հաջողվել է գեղարվեստական ձևն ու կերպարային բովանդակությունը բերել կատարյալ համաձայնության, դրանք ամբողջությամբ թափանցել ազգային ոգով, իսկապես հասնել «ռեալիզմի նախահիմքերին»,- եզրափակելով զեկուցումը՝ նշեց Ա. Աղասյանը:

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի կերպարվեստի բաժնի վարիչ, արվեստագիտության դոկտոր *Վ. Ղազարյանի* «Մարտիրոս Սարյանը և միջնադարը» բանախոսությունը մի կողմից՝ Սարյանի հայացքների ու նկարչության, իսկ մյուս կողմից՝ միջնադարյան գեղագիտության ու արվեստի միջև զուգահեռների բացահայտման մասին էր: Դրանցից են պայծառ գույներն ու դրանց կարևոր կենսական նշանակությունը թե՛ Սարյանի և թե՛ միջնադարյան հայ արվեստում, դրանց դիտումը՝ իբրև արարչական գործունեության ընկալում, միջնադարյան մանրանկարչությանը բնորոշ գունային կոնտրաստների և մոնումենտալության վերահայտնագործումը և զարգացումը Սարյանի արվեստում:

Հաջորդ՝ «Մարտիրոս Սարյանը և Ռուսաստանը» զեկուցման մեջ Մ. Սարյանի տուն-թանգարանի տնօրեն *Ռ. Սարյանը* նկատեց, որ Սարյանը մեծապես կապված էր Ռուսաստանի և ռուսական կերպարվեստի հետ թե՛ գործունեությամբ, թե՛ ստեղծագործությամբ: «Մասնագիտական կրթությունը ստանալով

Մոսկվայի գեղարվեստի ուսումնարանում՝ վարպետության դասեր առած Սերովի և Կորովինի պես մեծագույն նկարիչների մոտ, նա եղավ մեկն այն երիտասարդ նկարիչներից, որն առաջ մղեց XX դարասկզբի ռուսական արվեստը դեպի նորն ու առաջադեմը»: Վարպետը գործել է ռուս մշակույթի «արծաթյա դարի» փայլուն ներկայացուցիչների կողքին, ստեղծել ռուս անվանի դեմքերի դիմանկարների անզուգական պատկերասրահ: Ռուս մշակույթի զարգացման մեջ Սարյանի ներդրումը բարձր են գնահատել ռուս նկարիչներն ու արվեստաբանները, «արժեքավորել նրա արվեստի ազգային նկարագիրը, ուրույն ոճն ու անկրկնելի ներկապնակը»:

Արվեստագիտության թեկնածու Ա. Սարյանը գեղանկարչության և երաժշտության աղերսները քննության առավ հայր և որդի Սարյանների կողմից գույնի և հնչյունային գույնի կարևորության, գաղափարագեղարվեստական հայեցակարգային ըմբռնումների, արտահայտչամիջոցների օգտագործման յուրատիպ մեթոդի և ազգայինի դրսևորման տեսանկյուններով: Բանախոսը կոմպոզիտորի «Հայաստան» սիմֆոնիկ պաննոյի, սիմֆոնիայի և N 2 կվարտետի վերլուծությամբ ներկայացրեց կոմպոզիտոր Ղ. Սարյանի երաժշտությանը բնորոշ աշխարհընկալման, հնչյունային մտածողության, արտահայտչամիջոցների սեղմ օգտագործման և ազգային ուղղվածության առանձնահատկությունները, որոնք ձևավորվել են Մ. Սարյանի գեղանկարչության ազդեցությամբ: Հայր և որդի Սարյանների ստեղծագործության գեղարվեստական, գեղագիտական և այն մարմնավորող արտահայտչաձևերի համակարգի ամբողջականությամբ դրանք գնահատվում են որպես ազգային ավանդական արվեստի լավատեսական կենսափիլիսոփայությունը ժառանգած ստեղծագործություն:

Սարյանի գեղանկարչության և Իսահակյանի բանաստեղծության միջև հիմնական ուղենշային ընդհանրության բացահայտման մասին էր բանասիրական գիտությունների դոկտոր *Ա. Իսահակյանի* «Մարտիրոս Սարյան և Ավետիք Իսահակյան. աշխարհի բանաստեղծական ըմբռնումը» զեկուցումը: Դա երկու վարպետների խորապես ազգային էությամբ օժտված, անսահման հայրենասիրությամբ ներծծված աշխարհի բանաստեղծական ըմբռնումն էր: Թեև Սարյանն ու Իսահակյանը գործել են հայ մշակույթի տարբեր բնագավառներում, այդուամենայնիվ, զարմանալիորեն հոգեհարազատ են միմյանց և ներդաշնակ:

Մեծ վարպետի սան, ՀՀ վաստակավոր նկարիչ *Ա. Գրիգորյանն* «Իմ ուսուցիչը» բանախոսության մեջ ներկայացրեց դրվագներ իր և Վարպետի՝ առավել քան քառորդ դար տևած շփումներից:

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրեն, պատմական գիտությունների դոկտոր *Ն. Հովհաննիսյանը* պատմեց հետաքրքիր պատառիկներ՝ վարպետի հետ ունեցած երեք հանդիպումների մասին անմոռանալի հիշողություններից:

Գիտաժողովում որոշվեց տպագրության նախապատրաստել գիտաժողովում ընթերցված զեկուցումների ժողովածուն:

ԱՍԱՏՐՅԱՆ Ա. Գ.
Արվեստագիտության թեկնածու